

Հաստատված է  
“Ակադեմիական փոխճանաչման և շարժունության  
ազգային տեղեկատվական կենտրոն” հիմնադրամի  
Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝  
ՀՀ ԿԳ նախարար՝ Արմեն Աշոտյան

---

“ \_\_\_\_\_ “ \_\_\_\_\_ 2012թ.

Տարեկան հաշվետվություն  
2012թ

## Ներածություն

Ճանաչումը հանդիսանում է Բոլոնիայի գործընթացի կարևորագույն հիմնահարցերից մեկը, և վերջերս Բոլոնիայի գործընթացին հետամուտ խմբին կից գործող Ճանաչման աշխատանքային խումբը հաշվարկել է, որ «Ճանաչում» բառը առնվազն 60 անգամ հիշատակվում է նախարարական կոմյունիկեների մեջ: Բացի թվային ապացույցից, որ ճանաչումը հատկապես է կարևորվում Բոլոնիայի գործընթացում, գոյություն ունեն բամաթիվ այլ ձեռքբերումներ, որոնք ակնառու ցուցադրում են, որ ճանաչումը ո՛չ միայն գործընթացի հիմնական նպատակն է, այլ նաև գործիք է Բոլոնիայի մյուս նպատակների խթանման համար:

Բարձրագույն կրթության որակավորումների վերաբերյալ Լիսաբոնի ճանաչման կոնվենցիան իր բոլոր օրենսդրական լրացումների հետ միասին, հանդիսանում է Եվրոպական կրթական տարածաշրջանի (EHEA)<sup>1</sup> 47 անդամ երկրների համար միակ պարտադիր օրենսդրական փաստաթուղթը: Վերջին երկու տասնամյակների ընթացքում մշակվել են ճանաչումը խթանող տարբեր գործիքներ, որոնք հետագայում ներդրվել են համաեվրոպական և ազգային մակարդակներում: Այդ գործիքների թվում են ԷՆԻԿ-ՆԱՐԻԿ<sup>2</sup> միջազգային ցանցը, կրեդիտիների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգը (ECTS), դիպլոմի միասնական հավելվածը (Diploma Supplement), որակավորումների ազգային շրջանակները , և այլն:

Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնը (ԱՓՇԱՏԿ)<sup>3</sup>՝ հայկական Էնիկ-Նարիկը (Enic-Naric), տրամադրում է որակավորումների ճանաչման և խորհրդատվական ծառայություններ, որոնք ուղղված են ուսումնական հաստատություններին, պետական մարմիններին, անհատներին, գործատուներին և բոլոր այն շահառուներին, ովքեր ցանկանում են տեղեկանալ

---

<sup>1</sup> [www.ehea.info](http://www.ehea.info)

<sup>2</sup> [www.enic-naric.net](http://www.enic-naric.net)

<sup>3</sup> [www.armenic.am](http://www.armenic.am)

ազգային և այլ երկրների կրթական համակարգերի, նրանցում շնորհվող որակավորումների, որակավորումների ազգային համակարգերի, նախկին փորձառության ճանաչման և այլ տվյալների վերաբերյալ:

Սույն հաշվետվության մեջ ամփոփված են 2011թ.-ի ընթացքում հիմնադրամի կողմից իրականացված հիմնական աշխատանքները:

## 1. Ճանաչման իրավական խնդիրներ

Չնայած ճանաչման գործընթացում արձանագրված ձեռքբերումներին՝ անհատի կրթության իրական արժեքը պահպանող արդարացի ճանաչումը, դեռևս լուրջ խնդիր է՝ պահանջելով եվրոպական երկրների և նրանց կառավարությունների, ուսումնական հաստատությունների և այլ շահառուների ուշադրությունը: Լիսաբոնի ճանաչման կոնվենցիան ստորագրել են 54 և վավերացրել 51 երկիր, որոնց թվում են նաև այլ տարածաշրջանների երկրներ՝ ԱՄՆ, Կանադա, Ավստրալիա, Նոր Զելանդիա, Իսրայել: Այդուհանդերձ, կոնվենցիայի ներդրման իրավական խնդիրները դեռևս գոյություն ունեն երկրների մեծ մասում: *Հիմնականում, Լիսաբոնի ճանաչման կոնվենցիան և նրան կից իրավական փաստաթղթերը տարբեր կերպ են մեկնաբանվում երկրների կողմից, որի արդյունքում տարբեր են նաև ճանաչման ազգային գործառնություններն ու կարգերը:*

2011թ.-ին ՀՀ կարավարությունը հաստատեց Որակավորումների ազգային շրջանակը: Այնուհետև ԿԳ նախարարությունը մշակել է ՈԱԾ-ի ներդրման հիմնական քայլերը և իրականացման ժամանակացույցը: Համաձայն այդ փաստաթղթի նախատեսվում է մշակել օտարերկրյա փաստաթղթերի ճանաչման կարգ, որի աշխատանքներին կմասնակցի նաև հիմնադրամը: Այդ աշխատանքները նաև հնարավորություն կընձեռեն համապատասխանեցնել ազգային օրենսդրությունը և Լիսաբոնի ճանաչման կոնվենցիան:

## **2. Օտարերկրյա որակավորումների ճանաչում, խորհրդատվական տեղեկանքի տրամադրում**

2011թ-ին ԱՓՇԱՏԿ-ը շարունակեց անցած տարիներից դեռևս սկիզբ առած սերտ համագործակցությունը ՀՀ պետական մարմինների, բուհերի, գործատուների և այլ շահառուների հետ: Հաշվետու տարին նշանավորվեց նաև նոր համագործակցություններով, նոր հեռանկարային ծրագրերի մշակմամբ և իրականացմամբ, որոնցից առավել ուշագրավ են համագործակցությունները ՀՀ-ում ԱՄՆ-ի և Ֆրանսիայի դեսպանությունների, ինչպես նաև Բրիտանական խորհուրդի Հայաստանյան գրասենյակի և Միջազգային Բակալավրիատի կազմակերպության (IBO) հետ:

2011թ-ին ԱՓՇԱՏԿ-ի և ԱՄՆ Դեսպանության միջև ձեռք բերված երկկողմանի պայմանավորվածության համաձայն՝ ԱՓՇԱՏԿ-ը, այն ՀՀ քաղաքացիներին, որոնք շահել են գրին քարտ և ցանկանում են մեկնել ԱՄՆ, տրամադրում է անգլերեն լեզվով խորհրդատվական տեղեկանք՝ ՀՀ-ում տարբեր տարիներին ձեռք բերված որակավորումների, մասնավորապես՝ միջին մասնագիտական որակավորումների և նրանց ընձեռած ակադեմիական և մասնագիտական հնարավորությունների վերաբերյալ:

Հայաստանում Ֆրանսիայի դեսպանության Կրթության և մշակույթի դեպարտամենի հետ կազմակերպվել են հանդիպումներ, որոնց ընթացքում քննարկվել են Հայաստանի և Ֆրանսիայի կրթական համակարգերի առանձնահատկությունները, իրավական դաշտը և ճանաչման հարցերը, մասնավորապես՝ նախկին ուսումնառության ճանաչման և փորձի գնահատման հիմնախնդիրները: Ֆրանսիան այս ոլորտում ունի բավականաչափ զարգացած փորձ, ուստի համատեղ ծրագրերի մշակումը և իրականացումը կնպաստի Հայաստանում նախկին ուսումնառության և փորձի ճանաչմանն ուղղված գործընթացի զարգացմանը, որն էլ հանդիսանում է շարունակական կրթության օրակարգի կարևորագույն բաղադրիչը:

Ամփոփելով 2011 թվականի կատարված աշխատանքը՝ արձանագրվել է հետևյալ թվային ցուցանիշները.

- ընդհանուր առմամբ, ուսումնասիրված գործերի քանակը կազմել է 999 և նախորդ տարվա համեմատությամբ աճել է մոտ 4% -ով(տե՛ս դիագրամ 1):
- տարին առանձնահատուկ էր տրամադրված խորհրդատվական տեղեկանքների 56%-ով աճով. 2011թ.-ին՝ 178, 2010թ.-ին՝ 114 խորհրդատվական տեղեկանք,
- ճանաչման որոշում է կայացվել 90 օտարերկրյա դիմումների վերաբերյալ: Այս ցուցանիշը նվազել է 2010թ.-ի համեմատությամբ՝ 73 %-ով, (2010թ.-ին՝ 332 որակավորման ճանաչում), սակայն այն գերազանցում է 2009թ.-ի ցուցանիշը՝ 2.6 անգամ (2010թ.-ին՝ 25 որակավորման ճանաչում):
- տրամադրվել է շուրջ 731 խորհրդատվություն տարբեր կառույցներին: Համեմատության համար նշենք, որ այս ցուցանիշը 43%-ով գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշները (2007թ.-ին իրականացվել էր 362, 2008թ.-ին՝ 550, 2009թ.-ին՝ 678 , իսկ 2010թ.-ին՝ 514 խորհրդատվության տրամադրում),
- ընդլայնվել է նաև օտարերկրյա որակավորումների աշխարհագրությունը, որը տոկոսային հարաբերակցությամբ ներկայացված է դիագրամ 2-ում:

Հաշվետվությանը կից ներկայացված է ԱՓՇԱՏԿ-ի կողմից 2011 թվականի ընթացքում կատարված աշխատանքների վերլուծությունը գրաֆիկորեն (դիագրամ 1 և 2):

ԱՓՇԱՏԿ-ի գործունեության շնորհիվ զգալի բարձրացրել է իրազեկվածությունը ՀՀ և օտարերկրյա բարձրագույն կրթական համակարգերի և ազգային որակավորումների վերաբերյալ: Կարևոր է նաև նշել, որ ԱՓՇԱՏԿ-ը, հանդիսանալով ՀՀ-ում օտարերկրյա բարձրագույն կրթական որակավորումների ճանաչումը իրականացնող մարմին, խթանել է տարբեր բնագավառներում որակյալ մասնագետների շարժունությունը: 2011թ.-ին ակնառու է ճանաչման վերաբերյալ տեղեկանքների թվի նվազում. այս հանգամանքը առաջին հերթին պայմանավորված է, ներկայումս ՀՀ-ում օտարերկրյա որակավորումների ճանաչման միասնական կարգի

բացակայությամբ, որում հստակ նշված լինեն ճանաչման անհրաժեշտությունը և նրա համար պատասխանատու մարմինը: Արդյունքում, օտարերկրյա որակավորումները չեն գնահատվում, ավելին՝ հայտնի են նաև այնպիսի դեպքեր, երբ կեղծ փաստաթղթերով անհատները կարողանում են շարունակել կրթությունը ՀՀ բուհերում:

ԱՓՇԱՏԿ-ի ինտերնետային կայքը, որը գրանցված է ԷՆԻԿ/ՆԱՐԻԿ միջազգային ցանցում և անընդհատ թարմացվում է՝ տրամադրում է տեղեկատվություն ճանաչման գործընթացների և ազգային կրթական համակարգի որակավորումների վերաբերյալ: Հաշվետու տարվա ընթացքում կայքը այցելել են շուրջ 15000 այցելու: Ավելին՝ ՀՀ կրթական համակարգի և կառույցների վերաբերյալ տեղեկատվություն է տրամադրվել նաև ՅՈՒՆԵՍԿՕ<sup>4</sup>-ին, Ավստրալիական 4 Միջազգային քոլեջներ և համալսարաններ կազմակերպությանը (4 International Colleges & Universities):

Տարվա ընթացքում բացահայտվել են նաև կրթական փաստաթղթերի կեղծման դեպքեր, որոնք հիմնականում ներառել են օտարերկրյա որակավորումները (շուրջ 30 դեպք):

Հաշվետու տարվա ընթացքում կենտրոնը ամենատարբեր ակադեմիական փաստաթղթերի, կրթական համակարգերի, բարձրագույն ուսումնական հաստատությունների և կրթական ոլորտին վերաբերող բազմաթիվ այլ հարցերի վերաբերյալ շաբաթական շուրջ երկու տասնյակ պարզաբանում/խորհրդատվություն է տրամադրել նաև հեռախոսով, էլեկտրոնային փոստով կամ անձնական այցելություններով կազմակերպություն դիմած անհատներին:

---

<sup>4</sup> [www.unesco.org](http://www.unesco.org)

### **3. Տեղեկատվության տրամադրում շահառուներին և գործընկերներին**

ԱՓՇԱՏԿ-ը շարունակել է ակտիվորեն համագործակցել որակավորումների ճանաչման մի շարք արտասահմանյան կառույցների հետ, մասնավորապես՝ ԷՆԻԿ/ՆԱՐԻԿ (ENIC-NARIC) միջազգային ցանցի գործընկերների, տարբեր Եվրոպական երկրների որակի հավաստման գործակալությունների, ՅՈՒՆԵՍԿՕ-ի, Եվրոպական վիճակագրական վարչության և միջազգային ուսումնական հաստատությունների հետ՝ տրամադրելով տեղեկատվություն ՀՀ կրթական համակարգի, որակավորումների և կրթության որակավորումների ազգային շրջանակի վերաբերյալ:

Համագործակցությունը նաև շարունակվել է ԱՓՇԱՏԿ-ի մշտական գործընկերների՝ Կանադայի Օնտարիոյի ուսուցիչների քոլեջի (Ontario College of Teachers), CICIC-ի, ԱՄՆ-ի համաշխարհային կրթական ծառայության (World Education Services), Կրթության հետազոտությունների միջազգային հիմնադրամի (International Education Research Foundation) և մի շարք այլ կազմակերպությունների հետ, որոնք իրականացնում են կանոնակարգվող մասնագիտությունների ճանաչումը իրենց երկրներում: 2011 թվականի ընթացքում ակտիվ համագործակցություն է ծավալվել Ռուսաստանի Դաշնության Glavexpertcentr, Վրաստանի Կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի (National Center for Educational Quality Enhancement) և գերմանական Օտարերկրյա կրթության կենտրոնական գրասենյակի (Central Office of Foreign Education-ZAB) որակավորումների ճանաչմամբ զբաղվող կազմակերպությունների հետ:

ԱՓՇԱՏԿ-ը նաև ակտիվորեն մասնակցել է ԷՆԻԿ/ՆԱՐԻԿ (ENIC-NARIC) միջազգային ցանցի էլեկտրոնային քննարկումներին՝ որակավորումների ճանաչման, որակավորումների միջև եղած էական տարբերությունների, համատեղ աստիճանների, տրանսազգային ուսումնական հաստատությունների կողմից

շնորհիված որակավորումների ճանաչման և մի շարք այլ հարցերի շուրջ, որը փորձի փոխանակման լայն հնարավորություն է ընձեռել:

Հիմնադրամը մասնակցել է Լիսաբոնի կոնվենցիայի կոմիտեի բյուրոյի նիստերին և ԷՆԻԿ/ՆԱՐԻԿ (ENIC-NARIC) միջազգային ցանցի տարեկան հանդիպմանը, որտեղ քննարկվել են որակավորումների ճանաչման հետ կապված տարբեր հարցեր:

#### **4. Որակավորումների ազգային շրջանակ (ՈԱՇ)**

Համաձայն Բոլոնիայի գործընթացի նոր առաջնայնությունների՝ Հայաստանը մինչև 2012թ. պետք է ընդուներ ՈԱՇ-ը, որից հետո այն պետք է ինքնահավաստագրվեր: 2011թ. մարտ-ապրիլ ամիսներին Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատեց կրթության որակավորումների ազգային շրջանակը: ԱՓՇԱՏԿ-ը մասնակցել է նախարարության կողմից կազմակերպվող կրթության որակավորումների ազգային շրջանակի համատեքստում կազմված խմբի աշխատանքների քննարկմանը, ինչպես նաև համակարգել է ԿԳ նախարարության, Եվրախորհրդի կողմից կազմակերպված միջոցառումները, որոնք նպատակաուղղված են եղել քննարկելու ՈԱՇ-ի նախագիծը բոլոր շահառուների հետ, մասնավորապես՝ ուսումնական հաստատությունների՝ ներկայացնելու ընթացիկ իրավիճակը, հստակեցնելու աշխատանքային հետագա քայլերը և որակավորումների ազգային շրջանակի ինքնահավաստագրման քայլերն ու ժամկետները: Ավելին՝ ԵՊՀ-ում անցած տարվա ընթացքում ԿԳ նախարարության և Եվրախորհրդի համատեղ ջանքերով, ԱՓՇԱՏԿ-ը կազմակերպեց 2 սեմինար, որոնք նվիրված էին որակավորումների ազգային շրջանակի ներդրմանն ու գործարկմանը, ինչպես նաև ուսումնառության արդյունքների ընդհանրական բնութագրչների նկարագրմանը: Սեմինարներն անցկացրեց Եվրախորհրդի փորձագետ պրն. Ստյուարտ Գարվինը,



որոնց մասնակցում էին մոտ 50 և ավելի շահառու կողմեր, որոնց թվում էին՝ ուսումնական հաստատությունները, գործարարները, ուսանողները և այլ շահառուներ: Այժմ շարունակվում են աշխատանքները՝ ուղղված որակավորումների ազգային շրջանակի արդյունաբար ներդրմանը և գործարկմանը:

2011թ. ԱՓՇԱՏԿ-ի կողմից ներկայացվեց «Ճանաչման նոր մարտահրավերներ» գրքի հայերեն թարգմանությունը, որի հրատարակման համար դրամաշնորհը տրամադրվել էր Եվրախորհուրդի կողմից:

## **5. Բոլոնիայի գործընթաց**

2012թ.-ի ընթացքում ԱՓՇԱՏԿ-ը շարունակել է մասնակցել Բոլոնիայի գործընթացի աշխատանքներին, մասնավորապես՝ ճանաչման և որակավորումների ազգային շրջանակների ուղղություններով:

## **6. EUROPASS-ԹԱՅԵՔՍ**

Սույն թվականի հուլիսի 1-ին ՀՀ կրթության և գիտության նախարարությունը՝ ի դեմս ԱՓՇԱՏԿ-ի, և ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը Եվրոպական Հանձնաժողովի «Թայեքս» գործիքի շրջանակում կազմակերպել էին «Եվրոպասս»-ի (Europass) հիմնախնդիրներին նվիրված «Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքները Հայաստանում» թեմայով աշխատաժողով, որի հիմնական նպատակն էր կրթության ոլորտի շահագրգիռ մարմիններին ներկայացնել Եվրոմիության կողմից մշակված «Եվրոպասս»-ը և վերջինիս նպատակները, տեղեկատվություն տրամադրել նրա ֆունկցիաների և հիմնական գործիքաշարի

վերաբերյալ (Եվրոպասու-ի CV, Եվրոպասու-ի լեզվի անձնագիր, Եվրոպասու-ի վկայականի հավելված և Եվրոպասու-ի դիպլոմի հավելված), ներկայացնել ներդրման և կիրառման կարգը, ինչպես նաև Եվրոպասու ազգային կենտրոնների համացանցի գործունեությունը: Աշխատաժողովի ընթացքում ներկայացվել է ԵՄ լավագույն փորձը, գործող մոտեցումները, չափանիշներն ու սկզբունքները: Ներկայումս աշխատանքները ևս շարունակվում են:

## **7. Դիպլոմի հավելված**

ԱՓՇԱՏԿ-ի 2011թ. գործունեության ծրագիրը քննարկելու ժամանակ խորհուրդը առաջարկեց, որ հիմնադրամը հետագոտի ՀՀ-ի բուհերում դիպլոմի հավելվածի տրամադրման ներկայիս իրավիճակը: Հետագոտությունը իրականացնելիս հիմնադրամը համագործակցել է Բարձրագույն կրթության ռազմավարական հետազոտությունների ազգային կենտրոնի հետ, որը պատրաստել է “Հայաստանի բարձրագույն կրթության բարեփոխումների առկա վիճակն ու հեռանկարները Բոլոնիայի գործընթացի համատեքստում” զեկույցը: Կից ներկայացված է ուսումնասիրության հիմնական արդյունքները և առաջարկությունները՝ բարելավելու դիպլոմի միասնական հավելվածի տրամադրումը և նրա լրացման որակի հետ կապված խնդիրները(տե՛ս Հավելված 1):

## **8. Համատեղ աստիճաններ**

Համատեղ աստիճանները Բոլոնիայի գործընթացի կողմից առաջադրված համեմատաբար նոր գործիքներից է, և 2001թ. Պրահայի կոմյունիկեյում բարձրագույն կրթության նախարարները շեշտեցին դրանց կարևորությունը բուհերի միջացգայանցման,

ուսանողների և ակադեմիական անձնակազմի շարժունության խթանման համար: Համատեղ կրթական ծրագրերը նպաստում են բուհերի միջև համագործակցության ընդլայնմանը, իսկ ուսանողների համար նոր՝ ակադեմիական, լեզվական և մշակութային, փորձի ձեռքբերմանը: Համատեղ կրթական ծրագրերի իրականացումը բուհերին հնարավորություն է տալիս ընդլանելու օգտագործվող ֆինանսական և այլ տիպի միջոցները:

Համատեղ կրթական ծրագրերի կառուցվածքը ենթադրում է որոշակի ճկունություն, որը հաշվի է առնում ազգային առանձնահատկությունները, և կազմված է ազգային կրթական օրենսդրություններին համապատասխան, որոնք սահմանում են համատեղ աստիճանների շնորհման և ճանաչման գործընթացների իրավական կարգավորումները: Երկրների մեծ մասում համատեղ աստիճանների ներդրումը պահանջում է կատարել լրամշակումներ բարձրագույն կրթության օրենսդրական դաշտում:

*Առկա վիճակը:* Հայաստանի բուհերի կողմից համատեղ աստիճանների կիրառումը սկսվել է մի քանի տարի առաջ, և այսօր արդեն մի շարք բուհեր իրականացնում են համատեղ ծրագրեր: Մասնավորապես, «Վիզուալ հաշվարկ» մագիստրոսական ծրագիրը ԵՊՀ-ում մեկնարկվել է 2010-2011թթ. ուսումնական տարում: Նույն ծրագրի շրջանակներում 2011-2013թթ. ուս. տարիներում ԵՊՀ-ում նախատեսվում է ներդնել նաև այլ մագիստրոսական ծրագրեր: Ուսումնառության արդյունքում ուսանողներին կշնորհվի ինչպես ԵՊՀ, այնպես էլ Ռոստոկի համալսարանի մագիստրոսի աստիճան, որի նախադեպը չի եղել Հայաստանում: 2011թ-ին սկսել է գործել ԱՊՀ երկրների ցանցային համալսարանների միջև մի շարք մասնագիտություններով մագիստրոսական ծրագրեր: **2011թ. մեկնարկել է նաև Եվրասիա միջազգային համալսարանի և Լիտվայի Միկոլաս Ռոմերիս պետական համալսարանի "Էլեկտրոնային բիզնես" համատեղ մագիստրոսական ծրագիրը, որը իրականացվում է Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության (UITTE) և "Մայքրոսֆոտ"-ի հայաստանյան գրասենյակի աջակցությամբ:**

Համատեղ աստիճանների աճող նշանակելիությանը զուգընթաց՝ 2004թ. Լիսաբոնի ճանաչման կոնվենցիայի կոմիտեի կողմից վավերացվեց "Համատեղ աստիճանների ճանաչման հանձնարարականը"<sup>5</sup>: Այս հանձնարարականը Լիսաբոնի ճանաչման կոնվենցիային հարող փաստաթղթերից է, որի նպատակն է կարգավորել համատեղ կրթական ծրագրերի արդյունքում շնորհված՝ որակավորումների ճանաչման գործընթացը: Այդ հանձնարարականը հանդիսանում է համատեղ աստիճանների ոլորտը կարգավորող հիմնական իրավական փաստաթուղթը, որը ՀՀ-ը վավերացրել է Լիսաբոնի կոնվենցիայի հետ միասին:

Վերջին տասնամյակում համատեղ աստիճանները բուռն զարգացում են ապրել և՛ Եվրոպայում, և՛ աշխարհի այլ երկրներում՝ ներգրավելով հարյուրավոր բուհեր, տասնյակ հազարավոր ուսանողներ աշխարհի ամենատարբեր մասերից, ներառելով գիտական, պրոֆեսորա-դասախոսական, և ծրագրային տարբեր տիպի համատեղ նախաձեռնություններ: Ըստ մասնագետների կարծիքի՝ համատեղ ծրագրերը սկզբունքորեն կառուցված են ազգային բուհերի համագործակցության հիման վրա, և չեն կարող իրականացվել առանց ուսանողների շարժունության ապահովման, նույնիսկ վիրտուալ ձևով: Եվրոպական երկրների մեծ մասը հնարավոր է համարում համատեղ աստիճանների շնորհումը ինչպես ընդհանուր, այնպես էլ նեղ մասնագիտական բնագավառներում, նաև չի բացառվում կարգավորվող մասնագիտությունների համար այդպիսի աստիճանների ներդրման հետ կապված դժվարությունները:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում համատեղ աստիճանների շնորհմանը վերաբերող օրենսդրական դաշտը ամբողջովին բաց է, որը չի կարգավորում նրանց շնորհման, որակի և ճանաչման հարցերը: Ավելի խորը ուսումնասիրություն անելու համար՝ ԱՓՇԱՏԿ-ը 2011թ. ԿԳ նախարարություն է ներկայացրել համատեղ աստիճանների վերաբերյալ ծրագիր, որը հնարավորություն կտա ուսումնասիրության մեջ ներգրավել բուհերի և որակի ապահովման մասնագետներին: Ուսումնասիրությունը նախատեսում է իրականացնել բովանդակային վերլուծություն՝ Եվրոպական փորձի և ՀՀ

---

<sup>5</sup> Recommendation on the Recognition of Joint Degrees, June 2004

բուհերի փորձի ուսումնասիրության հիման վրա: Մասնավորապես, ծրագիրը նախատեսում է ուսումնասիրել ներկայումս գործող Եվրամիության Erasmus Mundus ծրագիրը, որը կրթաթոշակներ է տրամադրում համատեղ՝ բակալավրի, մագիստրոսի և դոկտորական ծրագրերի համար: Ծրագրում նախատեսվում է-ուսումնասիրել-համատեղ աստիճանների շնորհման միջազգային փորձը, մասնավորապես՝ օտարերկրյա օրենսդրական կարգավորումները և կոնկրետ բուհերում համատեղ աստիճանների շնորհման կարգը, լավագույն փորձի օրինակներ (good practice),  
-մշակել համատեղ աստիճանների շնորհման օրենսդրական բարեփոխումների փաթեթ դիպլոմների շնորհման կարգին համատեղ,  
-ուսումնասիրել համատեղ աստիճանների ճանաչմանն ու որակին առչնվող հիմնախնդիրները,  
-բուհերի համար կազմակերպել սեմինարներ միջազգային փորձագետների մասնակցությամբ,  
-թարգմանել «Համատեղ աստիճանների ճանաչման հանձնարարականը»,  
-հրատարակել ծրագրի ամփոփ արդյունքները:

## 9. Ճանաչման այլ կոնվենցիաներ


2011թ նոյեմբերի 25-26-ը Ճապոնիայի մայրաքաղաք Տոկիոյում տեղի է ունեցել Ասիայի և Իսադադովկիանոսյան ավազանի երկրների միջազգային կրթական համաժողով՝ նվիրված բարձրագույն կրթության որակավորումների ճանաչման գործընթացին, որը անցնում էր ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանու տակ: Համաժողովին մասնակցում էին տարածաշրջանի 26 երկրների ներկայացուցիչներ, Վատիկանի ներկայացուցիչները, ինչպես նաև Հայաստանի ներկայացուցիչը՝ ի դեմս ԱՓՇԱՏԿ-ի տնօրենի: Տարբեր տարածաշրջաններից ևս 9 երկրներ մասնակցում էին դիտորդի կարգավիճակով: Կոնվենցիան ՄԱԿ-ի կողմից ընդունվել է դեռևս 1993 թվականին, որին միացել էր նաև Հայաստանը՝ ի թիվս 21 այլ երկրների: Կոնվենցիայի նոր

տարբերակում սահմանվել են համագործակցության ավելի արդյունավետ ու գործուն մեխանիզմներ բարձրագույն կրթության համակարգի ակադեմիական որակավորումների փոխճանաչման ասպարաեզում:

Համաժողովի ընթացքում ներկայացվել է Ասիայի և Խաղաղօվկիանոսյան ավազանի երկրների բարձրագույն կրթության որակավորումների ճանաչման միջազգային կոնվենցիայի խմբագրված տարբերակը, որի հիմնական նպատակը անդամ երկրների միջև ակադեմիական փոխհամագործակցության ամրապնդումն է որակավորումների ճանաչման թափանցիկ ընթացակարգերի միջոցով: Համաժողովի ընթացքում Հայաստանի Հանրապետությունը՝ ի թիվս այլ 11 երկրների (Չինաստան, Ճապոնիա, Կորեա, Թուրքիա, Վատիկան և այլն) ստորագրել է Ասիայի և Խաղաղօվկիանոսյան ավազանի երկրների բարձրագույն կրթության որակավորումների ճանաչման միջազգային կոնվենցիան, ինչը հնարավորություն կտա ամրապնդել գոյություն ունեցող աշխարհագրական, մշակույթային, կրթական, գիտական և տնտեսական կապերը՝ պահպանելով կրթական համակարգերի ազգային առանձնահատկությունները՝ խթանելով մեր երկրների միջև ուսանողների և բուհերի դասախոսական կազմի շարժունությունը, գիտելիքների առաջընթացի համար մարդկային պոտենցիալի արդյունավետ օգտագործումը և բարձրագույն կրթության որակի ապահովումը: Այսօր մեծ արագությամբ աճող հանրային, մասնավոր, տրանսազգային բուհերի թիվը, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը կրթության ոլորտում, առաջ է քաշել նոր տիպի որակավորումների ճանաչման և որակի ապահովման հիմնախնդիրներ: Կարիք է առաջացել ազգային մակարդակներում ներդնել ուսման արդյունքների վրա հիմնված ճանաչման թափանցիկ գործիքներ: Կոնվենցիան սահմանում է որակորումների ճանաչման ընդհանուր սկզբունքները և չափանիշները որը հնարավորություն է տալիս ստեղծելու արդյունավետ ու թափանցիկ գործիքներ, ինչը կարևոր նախապայման է՝ մեր երկրի կրթական ծառայությունները գրավիչ և մրցունակ դարձնելու օտարերկրյա քաղաքացիների համար:


Դիագրամ 1

### 2007-2011թթ. իրականացված աշխատանքները



Շիագրամ 2

## Օտարերկրյա որակավորումների աշխարհագրություն



Հավելված 1



## Դիպլոմի միասնական հավելված

Դիպլոմի միասնական հավելվածը (ԴՀ) ըստ էության հաղորդակցման գործիք է, որի նպատակն է՝

- նպաստել որակավորումների ճանաչման գործընթացին,
- հասկանալի ձևով նկարագրել ուսանողի որակավորումներն ու հմտությունները, ձեռքբերումները՝ ուսումը շարունակելու կամ աշխատանքի անցնելու նպատակով,
- ընթեռնելի ձևով նկարագրել դիպլոմը և ուսումնական ծրագիրը, որը նաև հնարավորություն կընձեռի ճշգրիտ եզրակացություն կատարել օտարերկրյա որակավորումները ՀՀ տարածքում շնորհված որակավորումների հետ համադրելիս՝ թույլ տալով արդարացի որոշումներ կայացնել բավարար իրագեկված լինելու պայմաններում,
- բարձրացնել աշխատունակությունը ազգային և միջազգային մակարդակներում՝ բարձրագույն ուսումնական հաստատության և ուսումնական ծրագրի, շնորհված որակավորումների վերաբերյալ ամփոփ և ճշգրիտ տեղեկատվություն տրամադրելով:

Տվյալ ուսումնասիրությունը ուղված էր.

- հետազոտելու ՀՀ բուհերում դիպլոմի հավելվածի հետ կապված ներկայիս իրավիճակը, հատկապես՝ տրամադրման կարգը (տրամադրվում է շրջանավարտներին ըստ պահանջի, հիմնականում անվճար և երկլեզու):
- կատարել առաջարկություններ, որոնք դյուրին կդարձնեն հավելվածի պատրաստումը, որն էլ իր հերթին կլիթանի վերջինիս ներդրումը:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են ՀՀ բուհերի կողմից ԴՀ-ի նմուշների ուսումնասիրության արդյունքները առաջարկությունների տեսքով:

- Դիպլոմի հավելվածը պետք է լինի երկլեզու (հայերեն և որևիցե օտար լեզվով), տրամադրվի բոլոր շրջանավարտներին պարտադիր և անվճար
- Հարկավոր մշակել համընդհանուր դիպլոմի հավելվածի պետական նմուշը, որը կտրամադրվի դիպլոմի հետ միասին,

- Տրամադրվի կրթական բոլոր երեք աստիճանների՝ բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի համար,
- Դիպլոմի հավելվածի տրամադրումը ընդգրկվի բուհի ներքին որակի չափանիշների մեջ,
- Բարձրացնել իրազեկվածությունը բուհերում, ինչպես նաև գործատուների շրջանակներում, դիպլոմի հավելվածի էության և տրամադրման նպատակի (խթանելու որակավորումների ակադեմիական և մասնագիտական ճանաչումը) վերաբերյալ:
- Ուսանողները պետք է տեղեկացված լինեն դիպլոմի հավելվածի նպատակի և գործածության մասին, որի վերաբերյալ տեղեկատվություն կարող են ստանալ հետևյալ աղբյուրներից՝ բուհերի ուսումնական ուղեցույցներից և ինտերնետային կայքերից, ԿԳ նախարարության կայքից, ԱՓՇԱՏԿ-ի և Որակի ազգային կենտրոնի կայքից և այլ ուսումնական ինտերնետային կայքերից:

	ԵՆԹԱԿԵՏ	ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ		<ul style="list-style-type: none"> <li>• Դիպլոմի հավելվածը պետք է համապատասխանի միջազգային հավելվածի կառուցվածքին և համարակալմանը՝ ներառելով ընդհանուր նախաբանը:</li> <li>• ԴՀ-ի բովանդակությունը պետք է լինի ամբողջական, պարզ և հասկանալի:</li> <li>• Բոլոր կետերը պետք է լինեն լրացված և տեղեկատվության որակը բոլոր կետերում պետք է լինի նույնը:</li> <li>• Երկրի և բուհի անվանումը պետք է հստակ նշված լինի:</li> </ul>
1.ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՐԱԿՎԱՎՈՐՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԱՆՁԻ ՄԱՍԻՆ		<ul style="list-style-type: none"> <li>• Շատ կարևոր է, որ այս կետը լրացվի ուշադրությամբ և առանց որևէ վրիպումների, տառասխալների և այլ թերությունների:</li> </ul>
2. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՐԱԿՎԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ		

	<p>2.1 Որակավորման անվանումը և <i>(եթե կա այդպիսին)</i> շնորհվող կոչումը <i>(ընագրի լեզվով)</i>.</p>	<ul style="list-style-type: none"> <li>• Որակավորման անվանումը պետք է գրվի լրիվ և հայերեն լեզվով, ինչպես նաև պաշտոնական թարգմանությունը որևէ լեզվով (անգլերեն, ֆրանսերեն և այլն):</li> <li>• Որակավորման հապավումը պետք է ներառել, եթե այն պաշտոնապես գոյություն ունի, հակառակ դեպքում պետք է խուսափել որևէ հապավումներից:</li> </ul>
	<p>2.2 Մասնագիտությունը(ները)</p>	<ul style="list-style-type: none"> <li>• Բավարար տեղեկատվություն պետք է տրամադրվի շրջանավարտի մասնագիտության կամ մասնագիտացման հիմնական ուղղության, կրթական ծրագրի, հիմնական և կամընտրական առարկաների վերաբերյալ:</li> <li>• Տեղեկատվությունը պետք է լինի հակիրճ և պարզ, մանրամասները պետք է ներառվեն 4.3 կետում:</li> </ul>
	<p>2.3 Որակավորումը շնորհող հաստատության անվանումը և կարգավիճակը <i>(ընագրի լեզվով)</i></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Բուհի լրիվ պաշտոնական անվանումը հայերեն լեզվով պետք է ներառվի այս կետում: Լավ կլինի, որ ներառվի բուհի անվանումը նաև անգլերեն լեզվով:</li> <li>• Պետք է նշել բուհի պաշտոնական կարգավիճակը օրինակ՝ “Հավատարմագրված, պետական բուհ” նշելով համապատասխան որոշման տարեթիվը, հավատարմագրի համարը:</li> <li>• Եթե որակավորումը ձեռք է բերվել համատեղ կամ կրկնակի կրթական ծրագրի արդյունքում, ապա պետք է նշվեն ծրագիրը իրականացնող բոլոր բուհերի անվանումները:</li> </ul>
	<p>2.4 Ուսուցումը <b>իրականացնող</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Պետք է լինի ենթաբաժին, որտեղ նշվում է ուսուցումն</li> </ul>

	<p>հաստատության անվանումը և կարգավիճակը (2.3-ում կետում նշվածից տարբեր լինելու դեպքում) (բնագրի լեզվով).</p>	<p>իրականացնող բուհի անվանումը, եթե այն տարբեր է որակավորումը շնորհող բուհից:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Պետք է նշել բուհի լրիվ պաշտոնական անվանումը հայերեն լեզվով, ինչպես նաև անգլերեն թարգմանությամբ:</li> <li>• Տեղեկություն բուհի պաշտոնական կարգավիճակի վերաբերյալ, օրինակ՝ “Հավատարմագրված, պետական բուհ”, նշելով համապատասխան որոշման տարեթիվը և հավատարմագրի համարը:</li> <li>• Երբ որակավորումը շնորհվում է որևէ բուհի կողմից, հիմնվելով մի քանի տարբեր բուհերում իրականացված ուսման հիման վրա, ապա այստեղ պետք է նշել բոլոր մասնակից հաստատությունների անունները:</li> </ul>
--	--	---

### 3. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՄԱՍԻՆ

	<p>3.1 Որակավորման մակարդակը</p>	<ul style="list-style-type: none"> <li>• Օգտագործել մեկ ընդհանուր տերմինոլոգիա, ինչպես օրինակ Բոլոնիայի գործընթացից ծանոթ՝ “առաջին աստիճան, երկրորդ աստիճան, երրորդ աստիճան” տերմիններն են:</li> <li>• Պետք է խուսափել հապավումներից, մասնավորապես ազգային հապավումներից, երբ նրանք չեն ուղեկցվում իրենց ամբողջական անվամբ:</li> <li>• Տալ տեղեկություն Որակավորումների ազգային շրջանակում տվյալ որակատրման տեղի վերաբերյալ:</li> </ul>
--	----------------------------------	---

		Առավել մանրամասն տեղեկություն բարձրագույն ուսումնական համակարգի ինչպես նաև շրջանակների վերաբերյալ կարելի է նշել 8-րդ բաժնում:
	3.2 Ծրագրի պաշտոնական տևողությունը	<ul style="list-style-type: none"> <li>• Կիրառել ԿՓԵՀ (ECTS) համակարգ, եթե իրագործելի է:</li> <li>• Նշել ծրագրի տևողությունը տարիների քանակով, ինչպես նաև ուսանողի ուսումնական բեռնվածությամբ (ԿՓԵՀ):</li> </ul>
	3.3 Ընդունելության պահանջը (ները)	<ul style="list-style-type: none"> <li>• Պետք է խուսափել միայն ազգային տերմինաբանություն օգտագործելուց և առկայության դեպքում օգտագործել նաև Որակավորումների ազգային շրջանակ(NQF), Որակավորումների Եվրոպական շրջանակ(EQF), Եվրոպական բարձրագույն ուսումնական տարածք(EHEA) հասկացությունները:</li> <li>• Այստեղ պետք է նշել ընդունելության համապատասխան ընթացակարգը:</li> </ul>

#### 4 ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՁԵՌՔԲԵՐՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

	4.1 Ուսուցման ձևը	<ul style="list-style-type: none"> <li>• Նշել ուսուցման պաշտոնական ձևը, որը ընդգրկված է ուսումնական ծրագրում:</li> </ul>
	4.2 Ծրագրային պահանջները.	<ul style="list-style-type: none"> <li>• Նկարագրել ծրագրի պահանջները և ուսումնառության արդյունքը:</li> <li>• Տալ տեղեկություն յուրաքանչյուր դասընթացի/կրթական մոդուլի համար ուսանողի ուսումնական բեռնվածության (ԿՓԵՀ) վերաբերյալ:</li> </ul>

		<ul style="list-style-type: none"> <li>• Եթե ծրագրով պահանջվում է ավարտական աշխատանքի կատարում, ապա այն պետք է նշված լինի ուսանողի ուսումնական բեռնվածության մեջ (ԿՓԵՀ), ինչպես նաև այլ պարտադիր տարրեր, ինչպիսին են օրինակ՝ պրակտիկան, սեմինար և լաբորատոր պարապմունքները և այլն:</li> </ul>
	4.3 Ծրագրին առնչվող մանրամասները (օր.՝ ուսումնական մոդուլները կամ մասնաբաժինները) և անհատական գնահատականները/միավորները/կրեդիտները.	<ul style="list-style-type: none"> <li>• Այստեղ պետք է լինել հակիրճ և հասկանալի: Անհրաժեշտության դեպքում լրացուցիչ տեղեկությունների համար ընթերցողին ուղղորդել դիպլոմի ներդիր:</li> <li>• Դիպլոմի հավելվածին պետք է կցված լինի դիպլոմի ներդիրը իր մանրամասն նկարագրությամբ:</li> </ul>
	4.4 Գնահատման գործող համակարգը և գնահատականների բաշխման ուղեցույցը, եթե կա այդպիսին.	<ul style="list-style-type: none"> <li>• Տալ հակիրճ տեղեկություն կիրառվող գնահատման համակարգի վերաբերյալ, ինչպես նաև կիրառել (ԿՓԵՀ) համակարգը: Եթե ավարտական աշխատանքի համար կիրառվում է մեկ այլ գնահատման համակարգ, ապա այն նույնպես պետք է նշված լինի:</li> </ul>
	4.5 Որակավորման համընդհանուր դասակարգումը (բնագրի լեզվով)	<ul style="list-style-type: none"> <li>• Հակիրճ տեղեկություն տալ որակավորումների դասակարգման համակարգի վերաբերյալ, արտահայտված տոկոսներով կամ ընդհանուր ձեռքբերումներով, այնպես որ այն լինի հասկանալի նաև միջազգայնորեն:</li> </ul>
<b>5 ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ</b>		
	5.1 Գետազա ուսման հնարավորությունը	<ul style="list-style-type: none"> <li>• Հստակ և ճշգրիտ նշել հետազա ուսուցման</li> </ul>

		<p>հնարավորությունները:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Օգտագործել այնպիսի ընդհանուր տերմինաբանություն, ինչպիսին են օրինակ Բոլոնիայի գործընթացից ծանոթ ,առաջին աստիճան, երկրորդ աստիճան, երրորդ աստիճանե տերմինները :</li> </ul>
	5.2 Մասնագիտական կարգավիճակը <i>(եթե կա այդպիսին)</i> .	<ul style="list-style-type: none"> <li>• Տալ տվյալ որակավորմանը համապատասխան աշխատանքային ոլորտի բնորոշ նկարագիրը:</li> <li>• Կարգավորվող մասնագիտությամբ որակավորումերի դեպքում, երբ շնորհված որակավորումը տալիս է փորձառության իրավունք նշել հստակ՝ վկայակոչելով համապատասխան օրենքը:</li> </ul>
<b>6 ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>		
	6.1 Լրացուցիչ տեղեկություններ.	<ul style="list-style-type: none"> <li>• Այս բաժնում կարելի է նկարագրել և տալ տեղեկություններ անհատական կրթական ծրագրի և կրթական ծրագրից դուրս գործունեության մասին՝ ներառելով արտասահմանում անցկացրած ուսումնառության ժամանակաշրջանը, լրացուցիչ ուսումնառությունը այլ առարկաներից, պրակտիկան, ուսխորհրդում ընդգրկվածությունը և այլն:</li> </ul>
	6.2 Տեղեկատվական այլ աղբյուրներ	<ul style="list-style-type: none"> <li>• Տեղեկություն արտասահմանում ստացած կրթության, նախնական ուսուցման և կրթական ծրագրից դուրս ուսուցման ճանաչման վերաբերյալ և այլ կարևոր ու անհրաժեշտ տեղեկություններ:</li> </ul>

		<ul style="list-style-type: none"><li>• Տալ հավելյալ տեղեկություններ տվյալ բուհի և որակավորման վերաբերյալ:</li><li>• Տալ ինտերնետային կայքի հասցե կամ նշել այլ աղբյուրներ լրացուցիչ տեղեկություններ ձեռք բերելու համար:</li><li>• Նշել բուհի կոնտակտային հասցեն:</li><li>• Տեղեկություններ որակի ապահովման ներքին ու արտաքին մեխանիզմների և գործակալությունների վերաբերյալ:</li></ul>
--	--	---



<p><b>7 ՀԱՎԵԼՎԱԾԻ ՎԱՎԵՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Համապատասխան հաստատության պաշտոնական կնիքը և դրոշմանիշը՝ փաստաթուղթը վավերացնելու համար:</li> </ul>
<p><b>8 ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Պարզ և հակիրճ նկարագրել ազգային բարձրագույն կրթական համակարգը, ցանկալի է ներկայացնել նաև սխեմատիկորեն: Այնպես, որ հեշտությամբ կարելի լինի գտնել տվյալ որակավորման տեղը նկարագրված բարձրագույն ուսումնական համակարգում:</li> <li>• Եթե գործածվում է Որակավորումների ազգային շրջանակ (NQR), Որակավորումների Եվրոպական շրջանակ(EQR) և Եվրոպական բարձրագույն կրթության տարածք(EHEA) շրջանակները, ապա բացատրել և օգտագործել:</li> <li>• Նկարագրիր պետք է աջակցի դիպլոմի հավելվածի բովանդակությանը և խթանի նրա ընթեռնելիությունը:</li> <li>• Պետք է ճշգրտորեն նշել տվյալ տեղեկության աղբյուրը և/կամ հեղինակը:</li> </ul>

## ԱՓՇԱՏԿ-Ի 2012թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Հիմնական խնդիրներ	Հիմնավորում	Նախաձեռնվելիք քայլեր
1. Օտարերկրյա որակավորումների ճանաչում և խորհրդատվական տեղեկանքի տրամադրում	Ճանաչումը, խորհրդատվության և տեղեկատվության տրամադրումը հանդիսանում են հիմնադրամի հիմնական գործառույթները՝ սահմանված Լիսաբոնի ճանաչման կոնվենցիայում, որոնք տրամադրվում են անհատներին, բուհերին, պետական մարմիններին, էնիկ-նարիկ միջազգային ցանցի անդամներին, գործատուներին և այլ շահառուներին:	<ul style="list-style-type: none"> <li>▪ Ապահովել օտարերկրյա որակավորումների արդարացի և թափանցիկ ճանաչումը:</li> <li>▪ Տրամադրել խորհրդատվական տեղեկանք ՀՀ-ում ձեռք բերված որակավորումների վերաբերյալ՝ արտերկրում դրանց ճանաչումը հեշտացնելու նպատակով:</li> </ul>
2. Տեղեկատվության տրամադրում բոլոր շահառուներին և գործընկերներին		<ul style="list-style-type: none"> <li>▪ Հավաստի տեղեկատվության տրամադրում որակավորումների կրթական համակարգերի և ճանաչման ընթացակարգերի վերաբերյալ:</li> <li>▪ Համագործակցություն ՅՈՒՆԵՍԿՕ-ի, Ասիա-Խաղաղօվկանոսյան ավազանի երկրների հետ:</li> <li>▪ Մասնակցություն Եվրախորհրդի/ՅՈՒՆԵՍԿՕ-ի և Եվրամիության կողմից ճանաչման ոլորտում կազմակերպվող հանդիպումներին:</li> </ul>
3. Ճանաչման գործիքների հետագա արդյունավետ ներդրմանը աջակցում	ECTS-ը, դիպլոմի միասնական հավելվածը, ՈԱՇ-ը ներդրվել են ԿԳ նախարարության համապատասխան կարգերով 2007թ.-ից ի վեր: Հիմնադրամը հաջորդ տարիներին կշարունակի աջակցել բուհերին՝ այդ գործիքները առավել արդյունավետ կիրառելու:	<ul style="list-style-type: none"> <li>▪ Բուհերի համար վերպատրաստումների կազմակերպում:</li> <li>▪ Ուսանողների տեղեկացվածության բարձրացում գործիքների օգտագործման վերաբերյալ:</li> <li>▪ Գործատուների տեղեկացվածության բարձրացում:</li> <li>▪ «Ճանաչման ձեռնարկի» (հաստատված 2012թ. Բուխարեստում նախարարների կողմից) թարգմանություն և հրատարակում (ֆինանսական միջոցների առակյության դեպքում):</li> </ul>

<p>4. Կանոնակարգվող մասնագիտություններ</p>	<p>Երկրները սովորաբար ունեն իրենց կողմից հաստատված մասնագիտությունների ցանկ, որոնց դեպքերում սահմանվում են հատուկ պայմաններ, և եթե օտարերկրացիները ուզում են տվյալ երկրում աշխատել այդ մասնագիտությամբ, ապա նրանք պետք է բավարարեն այդ պայմաններին: Այդ մասնագիտությունները առնչվում են անհատի անվտանգության, ապահովության և այլնի հետ: ԵՄ-ը 2011թ. դեկտեմբերին վերանայել է համապատասխան դիրեկտիվը, որտեղ սահմանված են կրթության վերաբերյալ անհրաժեշտ պայմանները և մասնագիտությունները որոնք համարվում են կարգավորվող: Հաշվի առնելով ինտեգրման գործընթացները, Բոլոնիայի գործընթացը, անհատների շարժունությունը՝ անհրաժեշտ է ուսումնասիրել եվրոպական երկրների փորձը և այն համապատասխանաբար ներդնել ՀՀ-ում:</p>	<ul style="list-style-type: none"> <li>• Եվրախորհրդարանի 2005/36/EC հրահանգի հայերեն թարգմանության պատրաստում, տեղադրում կայքի վրա և հրապարակում (ֆինանսական միջոցների առկայության դեպքում):</li> </ul>
<p>5. Որակավորումների ազգային շրջանակի</p>	<p>2011թ. մարտին հաստատվեց ՀՀ որակավորումների ազգային</p>	<ul style="list-style-type: none"> <li>• Աշխատանքային խմբի ձևավորում միջազգային փորձագետի մասնակցությամբ:</li> </ul>

<p>ինքնահավաստագրում, կրթական ծրագրերի ուսումնառության արդյունքների հիման վրա ներկայացման մեթոդոլոգիայի մշակում, բուհերի համար սեմինարների կազմակերպում:</p>	<p>շրջանակը՝ հիմնված շարունակական կրթության սկզբունքի և եվրոպական որակավորումների ութ մակարդակների վրա: ՈԱՇ-ում բոլոր որակավորումները նկարագրվում են ընդհանրական բնութագրիչներով, որոնք նաև պետք է օգտագործել կրթական ծրագրերի մշակման, ինչպես նաև ճանաչման համար:</p>	<ul style="list-style-type: none"> <li>• Ինքնահավաստագրման զեկույցի նախագծի պատրաստում և քննարկում շահառուների հետ:</li> <li>• Ուսումնառության արդյունքների վերաբերյալ սեմինարների կազմակերպում՝ Եվրախորհրդի և ԵՄ Tuning Eastern Neighbouring Area ) ծրագրերի շրջանակներում:</li> </ul>
<p>6. «Խթանել ճանաչման փորձառությունների միջազգային թափանցիկությունը և համապատասխանությունը»</p>	<p>Համատեղ ծրագիր Ազլիական Նարիկի(UK NARIC) Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի մասնակցությամբ՝ ուղղված այլ երկրների որակավորումների ճանաչումը խթանելուն, մշակելու տվյալների պահպանման էլեկտրոնային համակարգ և ուսումնառության արդյունքների վրա հիմնված ճանաչման գործառույթների արդյունավետ ներդրում(ENIC Capacity Building Project):</p>	<ul style="list-style-type: none"> <li>▪ 2012թ. ապրիլին ծրագրի պաշտոնական մեկնարկ, որի ընթացքում կմաշկվի հետագա գործողությունների ծրագիրը և ժամանակացույցը:</li> <li>▪ 2012-2013թթ. սեմինարների կազմակերպում յուրաքանչյուր երկրում:</li> <li>▪ Տվյալների բազայի մշակում և ներդրում:</li> </ul>
<p>7. Մասնակցություն Բոլոնիայի գործընթացի աշխատանքներին</p>		